Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04.04.2022թ. *ք.Երևան*

*Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Աննա Զաքարյանս ուսումնասիրելով թիվ **07389984 և 08240958** կատարողական վարույթների նյութերը*

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

1. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 18.03.2021թ. տրված թիվ ԵԴ/8554/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Մերի Սերյոժայի Հովհաննիսյանից հօգուտ «Ինեկոբանկ» ՓԲԸ բռնագանձել 634256 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

2. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 25.10.2021թ. տրված թիվ ԵԴ/6714/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Մերի Սերյոժայի Հովհաննիսյանից հօգուտ «Ինեկոբանկ» ՓԲԸ բռնագանձել 259966 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

Պարտապանից բռնագանձել նաև ընդհանուր բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Մերի Սերյոժայի Հովհաննիսյանը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ներկայացրել տեղեկանք առ այն, որ աշխատում է «Արդիս» ՍՊԸ-ում որպես մերչնդայզեր և ամսական աշխատավարձը՝ ներառյալ հարկերը, կազմում է 140000 ՀՀ դրամ:

Պարտապանի վերաբերյալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնում առկա են բռնագանձման բնույթի այլ կատարողական վարույթներ:

Կատարողական վարույթով բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապան Մերի Սերյոժայի Հովհաննիսյանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պահանջատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար և պարտապանին պատկանող գույք և այլ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1 հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. *Կասեցնել թիվ **07389984 և 08240958** կատարողական վարույթները՝ 90-օրյա ժամկետով:*

2. *Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին՝ նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:*

3. *Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:*

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները

Digitally signed by ZAKARYAN ANNA 6302890403
Date: 2022.04.04 16:50:57 AMT

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱՆ *Ա. ԶԱՔԱՐՅԱՆ*